ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՏԴ 336.7
DOI: 10.56246/18294480-2023.14-11

ՄԱՐԴՈՅԱՆ ԱՇՈՏ
ՀՊՏՀ «Բանկային գործի և ապահովագրության» ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ ashot.mardoyan80@gmail.com

Տնտեսության իրական և ֆինանսական հատվածների միջև առկա կապերի էմպիրիկ գնահատում իրականացրել են բազմաթիվ հետազոտողներ, և այդ կապերը միանշանակ չեն: Հետազոտողները կարծում են, որ ֆինանսական հատվածի զարգացումը մեծ ազդեցություն ունի տնտեսական աճի վրա, որ ֆինանսական հատվածի դերը տնտեսական աճի տեսանկյունից գերագնահատվում է:

Վերջին տասնամյակներում, ֆինանսական համակարգի առավել շատ ճգնաժամային դրսևորումներով պայմանավորված, տարբեր տնտեսագետների և ինստիտուտների կողմից վերստին առաջ քաշվեց տնտեսության իրական հատվածի ոլորտների զարգացման և այդ հատվածի շնորհիվ կայուն տնտեսական աճի ապահովման կարևորությունը:

ՀՀ ներկայիս ծանր ժամանակաշրջանում մեծ նշանակություն ունի տնտեսության վարկավորումը: Կորոնավիրուսային իրավիճակը, պատերազմական գործողությունները ծանր հարված հասցրին տնտեսությանը: Այսօր կառավարության կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր՝ տնտեսության առանցքային ճյուղերը ֆինանսավորելու համար: Այս ժամանակաշրջանում բանկերը նույնպես փորձում են աջակցել տնտեսությանը՝ տրամադրելով արտոնյալ պայմաններով վարկեր: Փաստենք, որ հիմնական ցուցանիշներով այսօր ՀՀ տնտեսությունն արդեն անցել է առողջացման փուլը և այժմ զարգացում է ապրում, չնայած դեռևս մեծ խնդիր է մնում գնաճային ճնշումները:

Սույն հոդվածում փորձ է կատարվել բացահայտել ՀՀ իրական հատվածի վարկավորման առանձնահատկություններն ու հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ ներկայացնել որոշ առաջարկություններ:

Բանալի բառեր՝ *տնտեսության իրական հատված, բանկ, վարկավորում, տոկոսադրույք, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն:*

Ցանկացած երկրի տնտեսական համակարգի վերլուծություն իրականացնելիս նպատակահարմար է առանձնացնել երկու փոխկապակցված, սակայն առանձին աշխատող հատվածներ՝ ֆինանսական և իրական:

Տնտեսության հատվածային կառուցվածքի առաջին բնորոշումներից մեկը տրվել է Քոլին Քլարկի «Տնտեսական առաջընթացի պայմանները» գրքում, որը հրատարակվել է 1940թ.-ին: Գրքում հեղինակը տնտեսությունը ներկայացրել է որպես եռամակարդակ մոդել[3]:

Ե. Ռումյանցևան իր հեղինակած «Նոր տնտեսագիտական հանրագիտարան»-ում «տնտեսության հատված» տերմինը բնութագրում է որպես տնտեսական համակարգի տարր, որը դասակարգվում է ըստ հետևյալ առանձնահատկությունների.

- սեփականության ձևի (պետական, մասնավոր, մունիցիպալ),
- արտադրության չափերի (խոշոր (կորպորատիվ), միջին, մանր),
- ներդրումային գործունեության ոլորտների (իրական, ֆինանսական),
- ճյուղերի (արդյունաբերական, բանկային և այլն)[4]:

Իրական հատվածը բնութագրվում է ապրանքների արտադրությամբ, աշխատանքի կատարմամբ և ծառայությունների մատուցմամբ: Բացի դրանից՝ այն ներառում է նաև գիտական և առևտրային կազմակերպություններ: Հետևաբար կարելի է ասել, որ այն զբաղվում է նյութական և ոչ նյութական ապրանքների արտադրությամբ:

Իրական հատվածը նույնպես կառուցվածքային միավոր է: Այն ներառում է տնտեսության մի քանի ոլորտներ, որոնցից յուրաքանչյուրը առնչվում է մի քանի տեսակի ապրանքների՝ նյութական և ոչ նյութական ապրանքների հետ: Այսինքն՝ իրական հատված ասելով պետք է նկատի ունենալ ոչ միայն նյութական բարիքների արտադրության համակարգը, այլ նաև ծառայությունների ուղղակի մատուցման ոլորտը: Այն ներառում է ծառայություններ գիտության և կրթության, առևտրի բնագավառում: Տնտեսության իրական հատվածն իրականացնում է նաև արտադրություն, բաշխում, փո-

[3] https://www.jstor.org/stable/2225658.

[4] Румянцева Е. Е. Новая экономическая энциклопедия. М., 2005, с 478.

խանակում և սպառում, որոնք հիմնական չորս տնտեսական զարգացումներն են և բավարարում են հասարակության մեջ առաջացող կարիքները:

Ընդհանրացնելով վերը բերված սահմանումները և դատողությունները՝ կարող ենք ասել, որ տնտեսության իրական հատվածը խոշոր, միջին և փոքր այն առևտրային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնց հիմնական գործունեությունն ուղղված է շուկայում սպառողների նյութական պահանջմունքները բավարարող ապրանքների արտադրությանը:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ներկայացրած պարբերական զեկույցներում առանձնացվում են տնտեսության հետևյալ հատվածները՝ իրական, հարկաբյուջետային, ֆինանսական, արտաքին, սոցիալ-ժողովրդագրական: Սակայն տվյալ դեպքում իրական հատվածի համատեքստում դիտարկվում է ամբողջ համախառն թողարկումը ինչպես արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, այնպես էլ տրանսպորտի, կապի, առևտրի և այլ ծառայությունների ոլորտներում[5]:

Համաձայն ընդհանրացված սահմանումի՝ տնտեսության իրական հատվածը կներառի ISIC խմբ. 4-ի A-F բաժինները:

✓ ԲաժինA - Գյուղատնտեսություն, ձկնորսություն և անտառային տնտեսություն:

✓ ԲաժինB - Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում:

✓ ԲաժինC - Մշակող արդյունաբերություն:

✓ ԲաժինD - Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում:

✓ ԲաժինE - Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում:

✓ ԲաժինF - Շինարարություն[6]:

Հայաստանի Հանրապետությունը հենվելով միջազգային ստանդարտների վրա, սահմանել է այն ոլորտները և ճյուղերը, որոնք կարող են համարվել իրական հատված: Այդ ճյուղերն են՝

✓ գյուղատնտեսություն,

---

[5] Հ. Բեջանյան, Տնտեսության իրական հատվածի էությունն ու զարգացման դինամիկան ՀՀ-ում, էջ 3:

[6] World Development Indicators 2009", 2010.

✓ հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում,

✓ մշակող արդյունաբերություն,

✓ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում,

✓ ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում,

✓ շինարարություն:

ՀՀ-ում բանկային վարկավորման ներդրումային օբյեկտը տնտեսության իրական հատվածի ներդրումային նախագծերի կազմակերպումն է՝ կապված գործող արտադրության վերազինման և վերակառուցման, նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման, թողարկվող արտադրանքի արտադրության ընդլայնման կամ անվտանգության ավելացման հետ՝ ձեռք բերելով լրացուցիչ արտադրական հզորություններ:

Իրական հատվածի վարկավորումը ՀՀ-ում մի քանի հիմնական նպատակ է հետապնդում՝

- արտադրության ընդլայնում,
- վերակառուցում,
- լայն սպառման ապրանքների գնում,
- Գրասենյակների վերանորոգում և այլն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացնենք իրական հատվածի կազմակերպությունների պարտքերը բանկերի վարկերի և փոխառությունների գծով:

Ոչ ֆինանսական հատվածի կազմակեպությունների պարտքերը բանկերի վարկերի և փոխառությունների գծով /մլն.դրամ/[7]:

Գծապատկեր 1.



Գծապատկերից պարզ է դառնում, որ որոշ ոլորտներում վարկավորումը վերջին տարիների ընթացքում աճել է, որոշ ոլորտներում՝ նվազել: Վարկավորման ամենաբարձր ցուցանիշները առկա են հանքարդյունաբերության, մշակվող արդյունաբերության ոլորտներում, իսկ ամենացածրը՝ ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ոլորտներում:

Ներկայումս ՀՀ կառավարության աջակցությամբ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությանների կողմից տնտեսության իրական հատվածին տրամադրում են վարկեր՝ մի շարք ոլորտներում ակտիվությունը խթանելու նպատակով:

Քննարկենք դրանցից մի քանիսը, որոնք կարևոր նշանակություն ունեն տնտեսության իրական հատվածի համար:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի հիմնական նպատակն է հանրապետության ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել տնտե-

[7] https://armstat.am/file/article/finansner_2021_2.pdf.

սավարողների կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը[8]:

Ծրագիրը կարող է մեծ խթան լինել գյուղատնտեսության համար, սակայն այն նաև մեծ ռիսկեր է պարունակում՝ վարկը ոչ նպատակային օգտագործելու համար: Վարկառուները, սխալ տվյալներ ներկայացնելով, ձեռք են բերում վարկը և ծախսում գումարը ոչ նպատակային: Դրան հիմնականում նպաստում են շահառուների՝ գյուղում տարածք, անասուններ ունենալը, և այդ տվյալներին բավարարելով՝ կարողանում են համապատասխան գումարը ստանալ: Ճիշտ է՝ վարկը տրամադրելուց հետո իրականացվում են ստուգումներ նպատակայնության համար, սակայն այդքանով ռիսկը չի նվազում: Կարծում ենք, որ այստեղ կարևոր է ֆինանսական կազմակերպությունների ավելի մանրակրկիտ աշխատանքը և վարկի նպատակայնության ավելի մանրամասն ուսումնասիրությունը:

Առևտրային բանկերի կողմից մշտապես արտոնյալ պայմաններ են տրամադրվում նաև հանքարդյունաբերության ոլորտին: Այս ոլորտը ՀՀ տնտեսության շարժիչ ուժն է, ուստի արտոնյալ պայմանների տրամադրումը մեծ նշանակություն ունի: Ֆինանսական կազմակերպությունների կողմից հանքարդյունաբերության ոլորտին տրամադրվում է արտոնյալ տոկոսադրույքով վարկեր, անվճար քարտեր կամ հիմնական սակագներից շեղվող սակագներով քարտեր:

Կապիտալ շինարարությունը զարգացնելու նպատակով 2015թ.-ի փետրվարի 19-ին ՀՀ կառավարությունը ընդունեց որոշում, որով սահմանվեց «հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը»[9]: 2017թ.-ի հոկտեմբերի 5-ին ընդունվեց նոր որոշում, որով սահմանվեցին նոր սահմանափակումներ՝ 2018թ.-ի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների համար: Մասնավորապես ձեռք բերվող կամ կառուցապատվող բնակարանի կամ բնակելի տան արժեքը չպետք է գերազանցի 55 մլն դրամը[10]: Բացի դրանից՝ հիպոթեքային վարկի գծով վճարվող և վե-

---

[8] https://mineconomy.am/page/1340.

[9] ՀՀ կառավարության 19.02.2015 N 205-Ն որոշում:

[10] ՀՀ կառավարության 05.10.2017 N 1321-Ն որոշում:

ռադարձվող տոկոսագումարի եռամսյակային հանրագումարը չի կարող 1.5 մլն դրամից ավելի լինել: Եվ վերջապես, եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից նույն հարկատուն կարող է օգտվել միայն մեկ անգամ:

Ծրագրի նպատակը հիմնականում կապիտալ շինարարությունը զարգացնելն էր, որն, ըստ էության, կատարել է իր առջև դրված խնդիրը, որի լավագույն ապացույցը նորակառույց բազմաբնակարանային շենքերն են Երևան քաղաքի տարբեր հատվածներում: Այս ծրագիրը նաև սոցիալական նշանակություն պետք է ունենար՝ օգնելու աշխատողներին եկամտային հարկի միջոցով բնակարաններ ձեռք բերելու, սակայն կարելի է ասել, որ այս ուղղությամբ ծրագիրը բուն նպատակին չի ծառայել, քանի որ ծրագրից օգտվում են հիմնականում բարձր եկամուտներ ունեցող անձինք և բնակարաններ են ձեռք բերվում հիմնականում Կենտրոն վարչական շրջանում: Նշենք, որ Երևան քաղաքում, սկսած 2025 թվականի հունվարի 1-ից, ամբողջությամբ ծրագիրը դադարեցվելու է:

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից մեծ ուշադրություն է դարձվում բիզնեսին տրամադրվող վարկերին: Ֆինանսական շուկայում ձևավորվել է մրցակցություն: Բանկերը և վարկային կազմակերպությունները ձգտում են արտոնյալ պայմաններ առաջարկել՝ գրավելով իրավաբանական անձանց ուշադրությունը:

Ժամանակի ընթացքում Հայաստանի Հանրապետության բանկերում և վարկային կազմակերպություններում խստացվել են բիզնես վարկերի պայմանները: Մասնավորապես որոշ վարկատուներ հետևողականորեն ավելացրել են ապահովվածության (գրավի) պահանջի չափը: Ֆինանսական ինստիտուտների այս քաղաքականությունը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նրանով, որ ժամանակի ընթացքում նվազել է հիմնական վարկառու տնտեսվարողների վարկունակությունը: Վերջինս իր հերթին կապված է մասնավոր հատվածում ֆինանսական լծակի (leverage) աճի հետ, որը դրսևորվել է պարտավորություններ-ակտիվներ օպտիմալ հարաբերակցության խախտմամբ: Այլ կերպ ասած՝ Հայաստանի ձեռնարկություններում պարտքային ծանրաբեռնվածությունը հատել է այն կրիտիկական շեմը, որից այն կողմ խիստ սահմանափակ են հավելյալ վարկային միջոցներ ներգրավելու հնարավորությունները:

Առևտրային բանկերի կողմից տնտեսության իրական հատվածի վարկավորումը /մլն դրամ/[11]:

Գծապատկեր 2.



Գծապատկերում ներկայացված է 2018-2020թթ.-ի ընթացքում առևտրային բանկերի կողմից տնտեսության իրական հատվածի վարկավորումը: Գծապատկերից պարզ է դառնում, որ 2020թ.-ի ընթացքում վարկավորման ծավալները էական աճի տեմպ չեն ունեցել, քանի որ 2020թ.-ին տնտեսությունը 2 մեծ շոկեր ապրեց՝ կապված կորոնավիրուսի և պատերազմական գործողությունների հետ: Դրանք ծանր հարված էին տնտեսության համար, որի պատճառով տնտեսության մի շարք ոլորտներ հայտնվեցին մեծ ճգնաժամի մեջ, և այդ ոլորտների վարկավորումը դարձավ առավել ռիսկային:

ՀՀ-ում իրական հատվածին տրամադրվող վարկերը մեծ ռիսկեր են պարունակում՝ կապված վարկային միջնորդների, բնակչության անտեղյակության, վարկերի ոչ նպատակային օգտագործման հետ: Այս ռիսկերը զսպելու համար մեծ նշանակություն ունի բանկերի կողմից ավելի պատասխանատու մոտեցումը, ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունները:

Տնտեսության իրական և ֆինանսական հատվածների հավասարակշռված զարգացումը հնարավորություն կտա ՀՀ տնտեսությանը անցում կատարելու տեղեկատվական հասարակության, նորամուծական զարգացմամբ բարելավելու հայրենական տնտեսության երկարաժամկետ մրցակցային դիրքն ու մակրոտնտեսական կայունությունը:

[11] https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx.

Օգտագործված գրականության ցանկ

1. Румянцева Е. Е., Новая экономическая энциклопедия, М., 2005, с.826
2. Colin Clark, The conditions of economic progress., 1940, 504p
3. Հ. Բեջանյան, Տնտեսության իրական հատվածի էությունն ու զարգացման դինամիկան ՀՀ-ում, էջ 8:
4. https://armstat.am/am/ (ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք):
5. https://www.mineconomy.am/ (ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք):
6. https://www.cba.am/am/SitePages/Default.aspx (ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք):

PROBLEMS OF LENDING THE REAL SECTOR OF ECONOMY IN THE REPUBLIC OF ARMENIA

MARDOYAN ASHOT

PhD in Economics, Associate Professor,

ASUE, Head of Chair of Banking and Insurance

e-mail: ashot.mardoyan80@gmail.com

Empirical assessments of the links between the real and financial sectors of the economy have been conducted by many researchers, and these links are ambiguous. Researchers believe that the development of the financial sector has a major impact on the economic growth and that the role of the financial sector in terms of economic growth is overestimated.

In recent decades, due to the more critical manifestations of the financial system, various economists and institutions have again begun to put forward the importance of development of spheres of real sector in economy, ensuring sustainable economic growth due to the sector.

In the current difficult period for Armenia, lending of the economy is of great importance. The coronavirus situation and the war hit the economy hardly. Today, the government, in particular, is implementing a number of programs to finance key sectors of the economy. During this period, banks are also trying to support the economy by providing soft loans. Let us state that according to the main indicators,

today the Armenian economy has already passed the stage of recovery: now it is developing, although inflationary pressures are still a big problem.

Within the framework of this article, an attempt has been made to identify the peculiarities and issues of lending in the real sector of the Republic of Armenia to present some suggestions on them.

Key words: *real sector of economy, bank, lending, interest rate, agriculture, industry, construction.*

ПРОБЛЕМЫ КРЕДИТОВАНИЯ РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

МАРДОЯН АШОТ

Кандидат экономических наук, доцент

Заведующий кафедрой банковского дела и страхования *АГЭУ*

электронная почта: ashot.mardoyan80@gmail.com

Эмпирические оценки связей между реальными и финансовыми секторами экономики проводились многими исследователями, но эти связи неоднозначны. Исследователи считают, что развитие финансового сектора оказывает большое влияние на экономический рост, что роль финансового сектора в экономическом росте переоценивается.

В последние десятилетия, в связи с наиболее кризисными проявлениями финансовой системы, различные экономисты вновь стали настаивать на развитии секторов реального сектора экономики, выдвигая важную роль обеспечивания за счет этого сектора устойчивый экономический рост.

В нынешний сложный период Республики Армении большое значение имеет кредитование экономики. Ситуация с коронавирусом и война сильно ударили по экономике. Сегодня правительство, в частности, реализует ряд программ по финансированию ключевых секторов экономики. В этот период банки также пытаются поддерживать экономику, предоставляя льготные кредиты. Констатируем, что по основным показателям, сегодня экономика Армении уже прошла стадию восстановления, сейчас она развивается, хотя инфляционное давление все еще остается большой проблемой.

В рамках данной статьи предпринята попытка выявить особенности и проблемы кредитования в реальном секторе Республики Армения, представить по ним некоторые предложения.

Ключевые слова: *Реальный сектор экономики, банк, кредитование, процентная ставка, сельское хозяйство, промышленность, строительство.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 19.08.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 26.08.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.: